Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

Հաշվետվություն | BEELINE 2012

ՀԱՅԱՍՏԱՆ

Beeline®

Ընկերության մասին

Մելիքյան Սերգեյ
8 տարեկան

«Արմենտել» ՓԲԸ (ապրանքանիշը՝ Beeline) Հայաստանի խոշորագույն հեռահաղորդակցային ընկերությունն է: Ընկերությունը հիմնադրվել է 1995 թվականի մարտին Կապի և Տրանսպորտի նախարարության որոշմամբ, ամերիկյան Trans-World Telecom ընկերության հետ համատեղ: 2006 թ.-ի նոյեմբերի 3-ից «Արմենտել» ՓԲԸ հանդիսանում է աշխարհի խոշորագույն ինտեգրված օպերատորներից մեկի՝ «Վիմպելկոմ Լթդ» Ընկերությունների խմբի մաս:

«Արմենտել»-ը Beeline ապրանքանիշի ներքո Հայաստանի ողջ տարածքում մատուցում է GSM 900/1800 և 3G (UMTS) ստանդարտ շարժական կապի, ամրակցված հեռախոսակապի ծառայություններ, ինչպես նաև ապահովում է Ինտերնետ հասանելիություն CDMA ADSL և FTTB տեխնոլոգիաներով:

2007թ. ից ընկերությունը մատուցում է ADSL տեխնոլոգիայով լայնաշերտ Ինտերնետ հասանելիության Hi-Line ծառայություն, իսկ 2012թ.-ի մարտին կոմերցիոն շահագործման հանձնվեց FTTB տեխնոլոգիայի հիման վրա Hi-Line Optic ծառայությունն, որն առաջինը հասանելի դարձավ Գյումրիի բնակիչների համար: Շարունակաբար զարգացնելով ենթակառուցվածքներն, ավելացնելով հզորությունները և ընդլայնելով աշխարհագրական ցանցը՝ ընկերությունը խթանեց սպառողական ինտերնետ շուկայի զարգացումը: Որպես զանգվածային օգտագործման ծառայություն Հայաստանում, այսօր Hi Line ծառայությունը հասանելի է ավելի քան 60 բնակավայրում: 2010 թվականից ի վեր Հայաստանի առաջատար ինտերնետ պրովայդերների ցուցակը գլխավորում է «Արմենտել» ընկերությունը:

2012 թվականի դրությամբ Երևանի հեռախոսագծերի թվայնացման մակարդակը կազմում է 100 տոկոս, իսկ ողջ երկրում այդ ցուցանիշը գերազանցում է 83 տոկոսը: Բաժանորդային ցանցի մալուխների ընդհանուր երկարությունը գերազանցում է 13 000 կմ:

«Արմենտել» ընկերությունն առաջին բջջային օպերատորն էր, որ 2008 թ.-ին կոմերցիոն շահագործման հանձնեց 3G երրորդ սերնդի բջջային ցանցը: Այսօր 3G բջջային ցանցը հասանելի է ավելի քան 2,9 միլիոն բնակչություն ունեցող 150 բնակավայրում: Շարժական ինտերնետն օրեցօր ավելի մեծ պահանջարկ է վայելում: Միայն վերջին երեք տարիների ընթացքում շարժական ինտերնետի տրաֆիկն աճել է 291 անգամ, Հայաստանի տարբեր բնակավայրերում կառուցվել է ավելի քան 300 3G կայան:

Beeline®

2011

Ֆրիտյոֆ Նանսենի հայաստանյան ֆոնդը «ՍրմենՏել» ընկերության Գլխավոր Տնօրեն Իգոր Կլիմկոյին պարգևատրեց նորվեգացի մեծ հումանիստ Ֆ. Նանսենի անվան ոսկե մեդալով: Մրցանակը տրամադրվել է հասարակական ակտիվ գործունեության, տարբեր բարեգործական ծրագրեր իրականացնելու և երկրում սուր սոցիալական հարցերի լուծման մեջ ներդրում ունենալու համար:
2009-2012 թվականներին «ՍրմենՏել» ընկերությունը տրամադրել է ավելի քան 1 մլրդ. դրամ, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում իրականացնելով ավելի քան 130 ծրագիր՝ ուղղված կրթության, առողջապահության, սպորտի, երտասարդների մշակութային և հայրենասիրական դաստիարակման ոլորտներին:

2012

«ՍրմենՏել» ընկերությունը ճանաչվեց Հայաստանի էկոլոգիապես ամենապատասխանատու ընկերություն ծառայությունների մատուցման ոլորտում: Հանձնաժողովի կազմում ընդգրկված էին ներկայացուցիչներ ՀՀ բնապահպանության նախարարությունից, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից, Արհմիությունների համադաշնության և Հայաստանի Գործատուների Հանրապետական Միությունից:
2012թ-ի հոկտեմբերին «ՍրմենՏել» ընկերությունը պարգևատրվեց Հայաստանի գործատուների հանրապետական միության (ՀԳՀՄ) պատվոգրով՝ որպես կայուն աշխատատեղեր ստեղծող և տարբեր բարեգործական ծրագրեր հովանավորող կազմակերպություն:
2012թ-ի աշնանը մեկնարկեց բաժանորդների սպասարկման որակի բարելավման ծրագրի երրորդ փուլը, որի շրջանակում կապի բոլոր տեսակներ տրամադրող գրասենյակների կողքին, ընկերությունն ողջ հանրապետությունում կբացի գրասենյակներ, որոնք կսպասարկեն միայն բջջային կապի բաժանորդներին: Դեկտեմբեր ամսին գոյություն ունեցող ունիվերսալ գրասենյակների կողքին (79 վաճառքի և սպասարկման գրասենյակ) Հայաստանում գործում է նաև 7 բջջային կենտրոն:

Մեր առաքելությունը

Մենք օգնում ենք մարդկանց հաճույք ստանալ հաղորդակցումից, զգալ ազատ ժամանակի և տարածության մեջ...

Պողոսյան Լարիսա
9 տարեկան

Beeline®

Ընկերության սկզբունքները կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում

Վանյան Մարիամ
13 տարեկան

Ընկերությունը կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ռազմավարությունն իրականացնում է «Beeline հանուն Հայաստանի պայծառ ապագայի» խորագրի ներքո: Որպես ազգային օպերատոր՝ ընկերության սոցիալական ծրագրերը միտված են նպաստելու Հայաստանի բոլոր շրջանների համաչափ զարգացմանը:

Արժեքականություն

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության առավել նշանակալի ուղղությունները սահմանելու համար Ընկերությունն ուսումնասիրում է հասարակական պահանջները՝ երկրում սուր սոցիալական հարցերի լուծման մեջ առավելագույն ներդրում ունենալու համար:

Ընկերությունն աջակցում է ամբողջ երկրում կրթության որակի բարելավմանը. միայն վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանի տարբեր շրջաններում բացվել են 25-ից ավել համակարգչային դասարաններ, ֆինանսավորվել կրթական մի շարք ազգային և միջազգային մրցույթներ, իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ, որոնք նպաստել են կրթական համակարգի առավել արդյունավետ աշխատանքի ապահովմանը:

Ընկերությունն աջակցում է այն ծրագրերին, որոնք ուղղված են բարձր տեխնոլոգիաների ներդրմանը կրթական գործընթացում, ինչը թույլ է տալիս զգալիորեն հեշտացնել նոր գիտելիքներ ստանալու և անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու գործընթացն, ինչպես նաև խրախուսում է թվային հասարակության զարգացումը:

Սոցիալական քաղաքականության անկյունաքարն է հայ ժողովրդի մշակութային արժեքների պահպանությունը և դրանց փոխանցումը սերնդե սերունդ:

Համակարգվածություն

Տարիներ շարունակ մենք հանրապետության խոշորագույն գործատուներից մեկն ենք, և ձգտում ենք ապահովել արժանավայել և բարենպաստ աշխատանքային պայմաններ յուրաքանչյուր աշխատակցի համար:

2012թ-ին Գործատուների միությունը պարգևատրվեց «ԱրմենՏել»-ին որպես կայուն աշխատատեղեր ապահովող և տարբեր բարեգործական ծրագրեր հովանավորող ընկերություն:

Մենք նաև մեծ ուշադրություն ենք դարձնում շրջակա միջավայրի պաշտպանությանը և իրականացնում ենք բազմաթիվ ծրագրեր ուղղված բնության և բնական պաշարների պահպանությանը:

Հրապարակայնություն

2011թ-ից ի վեր «ԱրմենՏել» հրապարակում է տեղեկատվություն իրականացված հիմնական սոցիալական ծրագրերի մասին: Ստեղծման օրից սկսած մենք բաց ենք սոցիալական նախագծերում շահագրգիռ կողմերի հետ երկխոսության և համագործակցության համար:

Beeline®

Պարզություն, հրապարակայնություն, բարոյականություն

Նավոյան Հռիփսիմե
11 տարեկան

«ԱրմենՏել» ընկերությունը, հանդիսանալով հեռահաղորդակցության շուկայի խոշորագույն ինտեգրված ընկերություն, մշտապես հավատարիմ է մնում ընտրված արժեքներին՝ բիզնեսի իրականացման բոլոր մակարդակներում: Ընկերությունը հետևում է միջազգային բարձր չափանիշներին կադրային քաղաքականության ոլորտում, ներգրավում է շուկայի լավագույն մասնագետներին՝ աշխատանքի առավել արդյունավետություն ապահովելու համար, աջակցում է նորարարություններին՝ ներդնելով առաջատար տեխնոլոգիաներ, ինչպես նաև թողարկելով նորարարական լուծումներ ու ծառայություններ:

Շարունակական աշխատանքի արդյունքում մենք ձեռք ենք բերել մեկ կարևոր հմտություն. իրականություն դարձնել մեր գաղափարները և հասնել լավագույն արդյունքների, իսկ յուրաքանչյուր աշխատակցի, հաճախորդի և շուկայում առկա գործընկերների հանդեպ ազնիվ և արդար վերաբերմունքը դարձել է մեր հաջողության երաշխիքը:

Բարձրորակ կապի և որակյալ ծառայությունների տրամադրում

Մնացականյան Մոնիկա
10 տարեկան

Շարունակաբար զարգացնելով մեր ենթակառուցվածքները և ընդլայնելով մեր կողմից մատուցվող ծառայությունների տեսականին՝ մենք աշխատում ենք անել հնարավոր ամեն ինչ, որպեսզի ընկերության կողմից մատուցվող ծառայությունները հասանելի դառնան յուրաքանչյուրին անկախ նրա բնակության վայրից և սոցիալական վիճակից:

Յուրաքանչյուր բաժանորդի գոհունակությունը մեր հիմնական նպատակներից մեկն է. բարձրորակ կապի և որակյալ ծառայություններ տրամադրելիս մենք մշտապես առաջնորդվում ենք հետևյալ սկզբունքներով՝ տրամադրվող ծառայությունների բարձր որակ, սարքավորումների սերտիֆիկացում, ծառայությունների տրամադրման և տարիֆիկացման թափանցիկ համակարգ, որակյալ գովազդ, անձնական տվյալների պաշտպանություն և անվտանգ բջջային կապ:

2012-ին Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության հիմնական ուղղությունները

- Բարձր տեխնոլոգիաներ կրթական ոլորտում
- Երիտասարդական ծրագրեր
- Թվային հասարակության զարգացում
- Աջակցություն հատուկ կարիքներով երեխաներին
- Ազգային արժեքների պահպանություն
- Բնապահպանական ծրագրեր

Beeline®

Բարձր տեխնոլոգիաները կրթական ոլորտում

Հակոբյան Սուսաննա
12 տարեկան

Ժամանակակից և բարձրագույն ուսումնական հաստատություններում նոր գիտելիքները խրախուսելու նպատակով ընկերությունն աջակցում է մանկավարժների վերապատրաստման դասընթացների իրականացմանը, դասավանդման մեթոդների կատարելագործմանն ուղղված ծրագրերին ինչպես նաև ինտերնետ հասարակության զարգացմանն ուղղված նախաձեռնություններին: Միայն վերջին տարիների ընթացքում ընկերությունը տրամադրել է համակարգիչներ և անվճար ինտերնետ կապ հարյուրավոր կրթական օջախների ՀՀ մարզերում և Երևանում:

2012թ-ին նպատակ ունենալով բարձրացնել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և նպաստել ուսուցման գործընթացում թվային տեխնոլոգիաների արդյունավետ կիրառմանը՝ «ԱրմենՏել» ընկերությունը Հայաստանի մանուկներ հիմնադրամի հետ համատեղ Արմավիրի և Արագածոտնի մարզերի 6 գյուղում իրականացրեց «Դասավանդման մեթոդների կատարելագործում նոր տեխնոլոգիաների կիրառման միջոցով» ծրագիրը: Ավելի քան 100 ուսուցիչ, անցնելով համապատասխան դասընթացներ, ձեռք բերեցին հիմնական համակարգչային գիտելիքներ, ծանոթացան ինտերնետում աշխատելու և տեղեկատվական ռեսուրսներն ուսումնական գործընթացում օգտագործելու սկզբունքներին:

Արդեն երրորդ տարին է, ինչ «ԱրմենՏել» ընկերության հովանավորությամբ «Գործարարության զարգացման և օժանդակման կենտրոն» կազմակերպությունը անընդմեջ իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են դպրոցականների, ուսանողների, մանկավարժների համակարգչային գրագիտության բարձրացմանը: Ծրագրերին մասնակցել է շուրջ 400 դպրոցական և ուսանող ք.Վանաձորից և Լոռու մարզի այլ համայնքներից (Ստեփանավան, Դսեղ, Մարգահովիտ, Փամբակ և այլն), իսկ կատարված աշխատանքը նախադրյալ հանդիսացավ ընդլայնելու գործունեությունը և կիրառել փորձը նաև մարզի այլ համայնքներում:

Կարևորելով թվային տեխնոլոգիաների դերը կրթական ոլորտում՝ մենք միաժամանակ առանձնահատուկ նշանավորում ենք գրքի կարևորությունը որպես մարդկային ունակությունների զարգացման և կատարելագործման լավագույն ուղեցույց. այս տարի 11 դպրոցի գրադարաններ «ԱրմենՏել» ընկերության աջակցությամբ համալրվեցին Հայաստանի պատմությունը և մշակույթը ներկայացնող նոր գրքերով:

Երիտասարդական ծրագրեր

Արզումանյանց Վահեսլավ
7 տարեկան

Աջակցությունը երիտասարդական նախաձեռնություններին «ԱրմենՏել» ընկերության կորպորատիվ սոցիալական ռազմավարության հիմնական ուղղություններից է, և մենք իրականացնում ենք բազմաթիվ նախագծեր՝ օգնելով երիտասարդներին ինքնադրսևորվել կրթության, տեխնոլոգիաների, ստեղծագործության և սպորտի ոլորտներում:

Արդեն ավանդույթ է դարձել հովանավորել Կրթության և Գիտության նախարարության կողմից կազմակերպվող համահայկական նկարչական մրցույթ-փառատոնը, որի նպատակն է բացահայտել Հայաստանի, Արցախի և Սփյուռքի տաղանդաշատ երեխաներին, խրախուսել հայ պոեզիայի իմացությունը և նպաստել նրանց պատկերավոր մտածողության զարգացմանը: Ծրագիրը մեծ ժողովրդականություն է վայելում թե Հայաստանում, թե Սփյուռքում՝ տարեցտարի ներգրավելով ավելի շատ մասնակիցներ: Այս տարի ծրագրին մասնակցել են ավելի քան 1400 երեխա Հայաստանից, Արցախից և Սփյուռքից, ովքեր բացառիկ հնարավորություն ունեցան զարգացնելու նկարչական հմտություններ, ուսումնասիրել հայ բանաստեղծների անմահ ստեղծագործությունները և շփվել գեղեցիկի հետ:

Երիտասարդական ծրագրերին աջակցելու շրջանակում այս տարի ընկերության հովանավորությամբ անցկացվեց «Red Bull Paper Wings 2012» ազգային առաջնության փուլը: Հայաստանի բուհերի բազմաթիվ ուսանողներ մեծ ոգևորությամբ մասնակցեցին մրցույթին՝ ցուցադրելով թղթյա ինքնաթիռ պատրաստելու իրենց հմտությունները: Առաջին հայացքից պարզ և հասկանալի թվացող առաջադրանքները մասնակիցներից պահանջում էին երկրաչափության հիմունքների, աերոդինամիկայի և ֆիզիկայի օրենքների իմացություն: Մրցույթի մասնակիցները ցուցադրեցին բարձր պատրաստվածություն, իսկ բոլոր ներկաները ստացան դրական լիցքեր և անմոռանալի տպավորություններ: Թղթե ավիացիայի լավագույն հերոսները հնարավորություն ստացան ներկայացնել Հայաստանը Զալցբուրգում՝ աշխարհի առաջնության եզրափակչում:

Այս տարին նշանակալի էր էքստրեմալ մարզաձևերի երկրպագուների համար: Տարեսկզբին «ՍրմենՏել» ընկերության Գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն ընտրվեց էքստրեմալ մարզաձևերի «Ադրենալին» ասոցիացիայի պատվավոր նախագահ: Ողջ տարվա ընթացքում կազմակերպվեցին տարատեսակ առաջնություններ, որոնք նպատակ ունեին բարձրացնելու էքստրեմալ սպորտաձևերի ժողովրդականությունը երիտասարդների շրջանում, իսկ մեր մարզիկներին հնարավորություն ընձեռվեց ներկայացնել Հայաստանը միջազգային մի շարք մրցույթներում: Մեծ արձագանք գտավ և հազարավոր հանդիսատեսների բարձր գնահատականին արժանացավ Beeline Extreme 2012 փառատոնը, որտեղ հանդիսատեսին ներկայացվեց Drift, Off-Road 4x4, Drag-Racing դասերում վարորդների ելույթներ, մոտոշոու և այլ: Մայիս ամսին կայացավ Big Race 2012-ի երևանյան ռալլին: Միջոցառումը նշանավորվում էր նրանով, որ Հարավային Կովկասում ավտոսպորտի պատմության մեջ առաջին անգամ միմյանց հետ մրցում էին ոչ միայն մարդատար այլ նաև բեռնատար մեքենաներ: «ՍրմենՏել»-ի և «Ադրենալին» ասոցիացիայի համագործակցության շնորհիվ Հայաստանում էքստրեմալ սպորտաձևերի սիրահարներն առաջին անգամ ականատես եղան այնպիսի միջոցառումների, ինչպիսին են Tuning Show, Quadra Drive 2012, Jeep-Pro բաց առաջնությունը: Ընդհանուր առմամբ այս ծրագիրը մեծ արձագանք գտավ էքստրեմալ սպորտաձևերի սիրահարների շրջանում, իսկ հազարավոր երիտասարդներ իրենց համար հայտնաբերեցին նոր սպորտաձև՝ դառնալով նրա երկրպագուն:

Beeline®

Թվային հասարակության զարգացում

Գասպարյան Մնի
6 տարեկան

Կարևորելով տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների (ՏՀՏ) դերը տնտեսության տարբեր ոլորտներում, «ԱրմենՏել» ընկերությունն հանդիսանալով ԻՏԶՄ-ի լիիրավ անդամ, արդեն 3-րդ անգամ աջակցում է «Դիջիթեք» բիզնես ֆորումին: Ընկերությունը չափազանց կարևորում է նման ֆորումների հաճախակի կազմակերպումը մեր երկրում, քանի որ այն հնարավորություն է տալիս մասնակիցներին ծանոթանալու այն առավելություններին, որ կարող է իրենց տրամադրել ՏՀՏ գործիքների կիրառումն իրենց բիզնեսում՝ խթանելով իրենց ընկերությունների վաճառքները, նոր շուկաների նվաճումը, հաճախորդների, արտադրանքների որակի կտրուկ բարձրացումը, արտադրողականության ավելացումը և այլն:

2012թ-ին առաջին անգամ Հայաստանում «ԱրմենՏել» ընկերության աջակցությամբ Համաշխարհային Վիկիմեդիա հիմնադրամի հետ համատեղ անցկացվեց առաջին Վիկի-կոնֆերանսը, որին մասնակցեցին ինտերնետ-հանրության ավելի քան 200 ներկայացուցիչ: Միջոցառմանը մասնակցելու համար Հայաստան էին ժամանել միջազգային Վիքիմեդիա հիմնադրամի ներկայացուցիչներ, ինչպես նաև Վիքիմեդիայի ներկայացուցիչներ՝ Հունգարիայից, Վրաստանից և Ռուսաստանից:

Կոնֆերանսի ընթացքում քննարկվեցին այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են ազատ տեղեկատվության և ծրագրային ապահովման տարածման, հեղինակային իրավունքների պաշտպանության, ինչպես նաև աշխարհի խոշորագույն էլեկտրոնային հանրագիտարանի գիտելիքների հայալեզու բազայի ավելացման և դրա զարգացման գործում հայ երիտասարդների ներգրավման խնդիրները:

Աջակցություն հատուկ կարիքներով երեխաներին

Մնացականյան Ելենա
6 տարեկան

«Ադամենտել» ընկերության սոցիալական ռազմավարության ծրագրերում առանցքային տեղ է գրավում աջակցությունը հատուկ կարիք ունեցող երեխաներին:

Տարիներ շարունակ ընկերությունն աջակցում է Philatelpia հասարակական կազմակերպությանն իրականացնելու ծրագրեր, որոնք ուղղված են հատուկ կարիքներով երեխաների խնդիրների վերաբերյալ բնակչության իրազեկության բարձրացմանը: Կենտրոնում ցուցաբերվում է սոցիալական և հոգեբանական օժանդակություն կենտրոն հաճախող երեխաների ծնողներին, իսկ հատուկ կարիքներով երեխաների համար իրականացվում է որակավորման բարձացմանն ուղղված ինչպես նաև համակարգչային ուսուցման դասընթացներ՝ առանձնահատուկ նշանակություն տալով հասարակությունում հատուկ կարիքներով երեխաների ինտեգրմանը:

Հատուկ կարիքներով երեխաների օգնության վառ օրինակներից մեկն է Մանկական զարգացման հիմնադրամի հետ համագործակցությունը, որի արդյունքում ստեղծվեց «Մենք ենք» ներառական թատերական խումբը: Համագործակցության նպատակն էր աջակցել հատուկ կարիքներով երեխաների ինտեգրմանը հասարակության մեջ ուսումնական ծրագրերի և արվեստի թերապիայի միջոցով: «Ես ուզում եմ հավատալ» թատերական ներկայացումը բեմականացվել է Երևանի, Վանաձորի և Գյումրիի ներառական և հանրակրթական դպրոցներում՝ արժանանալով հանրության բարձր գնահատականի:

Ազգային արժեքների պահպանմանն ուղղված ծրագրեր



Փալջյան Սերոփ
8 տարեկան

Սոցիալական քաղաքականության անկյունաքարն է հայ ժողովրդի մշակութային արժեքների պահպանությունը և դրանց փոխանցումը սերնդէ սերունդ:

Այս տարի «ԱրմենՏել» ընկերությունը և «Մեդիամաքս» մեդիա ընկերությունը իրականացրեցին «Երևան. XX դար» հատուկ ծրագիրը: Յանրությանը ներկայացվեց XX-րդ դարի 1940-1980-ականների Երևանն, իսկ յուրաքանչյուր պատմության գլխավոր հերոսներն էին ոչ միայն հուշարձանները և կառույցները, այլև երևանցիները և տվյալ ժամանակաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները: Ծրագրի միջոցով մենք փորձեցինք պահպանել և երիտասարդ երևանցիներին փոխանցել XX դարի Երևանի սիրտն ու ոգին` հանդիսանալով կապող օղակ հնի և նորի ստեղծման ճանապարհին: Նախագծի նշանակալից ձեռքբերումն էր «Երևան. XX դար» գրքի հրատարակությունը: Գրքում ներառվել են 15 պատմություն երևանցիների համար խորհրդանշական շենքերի և վայրերի մասին: Գիրքը տպագրվել է 1000 օրինակ: Գրքի վաճառքից ստացված գումարի մի մասը Մեդիամաքսը և «ԱրմենՏել»-ը 2013թ.-ին կօգտագործեն Երևանում որևէ հուշարձանի կամ պուրակի վերանորոգման համար:

Beeline

2012թ-ի մարտ ամսին Գաֆեսճեան արվեստի կենտրոնը «ԱրմենՏել»-ին շնորհեց Բարերար մակարդակի կորպորատիվ անդամակցության վկայագիր՝ 2011 թվականին մանկական և երիտասարդական, կրթական ու ստեղծագործական ծրագրերին աջակցելու համար:

Ընկերությունը մեծ ուշադրություն է դարձնում գեղագիտության զարգացմանը՝ աջակցելով հայ նկարիչներին: Այդ նպատակով հովանավորվել է ազգային և պետական տոնակատարություններին նվիրված երեք տասնյակից ավել ցուցահանդես: Ընկերության աջակցության շնորհիվ բազմաթիվ երիտասարդ նկարիչներ հնարավորություն ունեցան ներկայանալ հայ և միջազգային հանրությանը՝ հնարավորություն տալով հազարավոր մարդկանց շփվել գեղեցիկի հետ և գնահատել հայ գեղագիտությունը:

Բնապահպանական ծրագրեր

Իվանյան Աննա
10 տարեկան

Հոգատար վերաբերմունքը շրջակա միջավայրի հանդեպ մեր բիզնեսի փիլիսոփայությունն է: 2011 թ.-ից ի վեր Ընկերությունում մեկնարկած «Էկոֆիս» նախագծի շրջանակում մենք հնարավորություն ենք փնտրում բնական պաշարների օգտագործման օպտիմալացման համար: Նախագծի շրջանակում իրականացվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք ուղղված են շրջակա միջավայրի պահպանմանը և բնական պաշարների ճիշտ օգտագործմանը:

Հայաստանի մանուկներ հիմնադրամի հետ համատեղ մենք իրականացրեցինք «Ազատենք շրջակա միջավայրը պոլիէթիլենային տոպրակներից» բնապահպանական ծրագիրը, որի շրջանակում արտադրվեցին և տարածվեցին կտորե պայուսակներ, որոնց օգտագործումը հնարավորություն կտա կրճատել շրջակա միջավայրին մեծ վնաս հասցնող պոլիէթիլենային տոպրակների կիրառումը: Իրականացվող ծրագրի շրջանակում լուծվեցին ոչ միայն էկոլոգիական այլ նաև սոցիալական հարցեր, քանի որ այս ծրագրի միջոցով մենք նպաստեցինք գյուղական համայնքում գործարարության զարգացմանն ու կանանց համար աշխատատեղերի ստեղծմանը:

Մեր հոգատար վերաբերմունքը բնության և շրջակա միջավայրի հանդեպ այս տարի բարձր գնահատականի արժանացավ նաև հանրության կողմից: «ՍրմենՏել» ը ճանաչվեց Հայաստանի էկոլոգիապես ամենապատասխանատու ընկերություն ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Սրհմիությունների համադաշնության և Հայաստանի Գործատուների Հանրապետական Միության կողմից «Կանաչ տնտեսություն և կանաչ աշխատատեղեր» մրցույթի շրջանակներում:

Վերջաբան

Առաքելյան Մարիա
9 տարեկան

Իր ստեղծման առաջին իսկ օրից «ՄրմենՏել» ընկերությունն որպես ազգային օպերատոր իրականացնում է բազմաթիվ ծրագրեր՝ նպատակ ունենալով նպաստել երկրի համաչափ զարգացմանը և սոցիալական խնդիրների լուծմանը:

2012թ ին նույնպես Ընկերությունն աջակցեց բազմաթիվ ծրագրերի՝ ուղղված կրթության որակի բարելավմանը՝ քաջ գիտակցելով, որ կրթված սերունդը վառ ապագա կերտելու հիմնական գրավականն է, իսկ միջազգային և ազգային տարբեր կառույցների հետ համատեղ իրականացված ծրագրերը հնարավորություն ընձեռեցին մեր տաղանդավոր երիտասարդներին ներկայացնել Հայաստանը միջազգային տարբեր ասպարեզներում:

Ընկերությունը հատուկ ուշադրություն է դարձնում հատուկ կարքներով երեխաների ինտեգրմանը հասարակության մեջ և այդ նպատակով աջակցում է բազմաթիվ ծրագրերի իրականացմանը:

Ինչ վերաբերում է ազգային և մշակութային արժեքների պահպանմանը և դրանց փոխանցմանը սերնդե սերունդ, ապա այս ուղղությունն «ՄրմենՏել» ընկերության գործունեության հիմնաքարերից մեկն է, իսկ հոգատար վերաբերմունքը շրջակա միջավայրի հանդեպ մեր բիզնեսի փիլիսոփայությունն է:

Որպես սոցիալապես պատասխանատու օպերատոր՝ 2013թ-ին նույնպես մենք շարունակելու ենք իրականացնել բազմաթիվ ծրագրեր սոցիալական պատասխանատվության շրջանակում և հավատացած ենք, որ մենք մեր լուման կներդնենք երկրի համար կարևորագույն հարցերի լուծման գործընթացում:

Նկարները տրամադրելու համար շնորհակալություն ենք հայտնում Ս. Լ. Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնին:

Beeline®